եղաւ ինձ մնալ մինչև 35 մայիսի։ Նոր քաղաք է Պերտեանք, բնակիչքը 14,000, Ազախու ծովու վրայ. ցորենի մեծ վաճառականութիւն ունի։ Եւրոպացիք ունին մեծամեծ վաճառատներ, և ցորեն գնելով յԵւրոպայ կ'ուղարկեն. ազգայինք սակաւաւոր են հոս, և չունին առանձին եկեղեցի. թէպէտ ծուխը ոչ բազմաթիւ, այլ վայելչաձև է հռովմէականաց եկեղեցին։

Շաբաթ օր, ամսոյն 5 ին, առաւօտեան ժամը ութին մեկնելով քաղաքէս չոգենաւով, վեց ժամէն հասանք Եկատերինեսլաւ գաւառի, (Ղրիմնցի գաղթական ցունաց) մայր քաղաքը Մարիապոլ, որ և Մարիամու քաղաք, 'ի պատիւ հրաշագործ պատկերի Տիրամօրն, զոր Ղրիմու Պահչէսերայի վանքէն հոս փոխադրուելուն պատճառաւ՝ այդ անունը տուած են քաղաքին. բնակչաց թիւը 10,000 մեծաւ մասամբ ցոյն են, որ և նոյն տարին Նախիջևանու ազգայնոց հետ գաղթած են 'ի Ղրիմէ. սոքա գրեթէ ամենքը ձկնորսութեան կը պարապին. փոքրիկ ծովուն ամեն անկիւններուն և խորշերուն մէջ ձգած՝ տարածած են ցանցեր և ուռկաններ. թուխու 1 ձկան զանազան տեսակները, իրենց համեղաճաշակ կիթերով, տեղացւոց ապրուստի, միանգամայն վաճառականութեան մեծ և շահաբեր նիւթ են. բաց աստի՝ կան քաղաքիս մէջ Իտալացի ցորեն ծողովող տներ։ Կէս օրէն վերջը ժամը երկուսին հասանք հոս, և որովհետև նաւը մինչև երեկոյեան ժամը տասին պիտի սպասէր բեռ տալու և բեռ առնելու համար, ինձ քաղաքը պտտելու։ Քարուխիճ ճանապարհին ուղղութեամբ գնալով փոքրիկ

(1). Esturgeon.